Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

« ---- » ---------- 2019թ. **N – Ա**

ՈՐՈՇՈՒՄ

«ԻՐԻՆԱ ՌՈԴՆԻՆԱՅԻ ԳԵՂԱՍԱՀՔԻ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ և 23-րդ կետերով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. «Իրինա Ռոդնինայի գեղասահքի մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխել «Երևանի գեղասահքի և հոկեյի մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության:

2. Հաստատել «Իրինա Ռոդնինայի գեղասահքի մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

ԼՈՒՅՍ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԻՐԻՆԱ ՌՈԴՆԻՆԱՅԻ ԳԵՂԱՍԱՀՔԻ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

«Իրինա Ռոդնինայի գեղասահքի մարզադպրոց» համայնքային ոչ առեվտրային կազմակերպությունն անվանափոխելու և կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման դեպքում երևան քաղաքի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԻՐԻՆԱ ՌՈԴՆԻՆԱՅԻ ԳԵՂԱՍԱՀՔԻ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրինա Ռոդնինայի գեղասահքի մարզադպրոց» համայնքային ոչ առեվտրային կազմակերպությունն անվանափոխելու և կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջացնում:

ԼՈՒՅՍ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԻՐԻՆԱ ՌՈԴՆԻՆԱՅԻ ԳԵՂԱՍԱՀՔԻ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Իրինա Ռոդնինան ում անունով անվանակոչվել է Երևանի գեղասահքի մարզադպրոցը և ով հանդիսանում է Ռուսաստան-Հայաստան միջխորհրդարանական հանձնաժողովի նախագահի տեղակալ փետրվարի 26-ին մասնակցել է Ադրբեջանի մայրաքաղաք Բաքվում տեղի ունեցած երթին, որը կրել է վառ արտահայտված հակահայկական բնույթ և ուղղված է եղել տարածաշրջանում խաղաղության և կայունության խաթարմանը: Իրինա Ռոդնինան մասնակցելով այդ միջոցառմանը իր հարցազրույցում միակողմանի դիրքորոշում է հայտնել 1992թ. Խոջալու գյուղում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ, դրանով իսկ փաստելով, որ իր մասնակցությունը այդ երթին տեղի է ունեցել ոչ հանգամանքների բերումով:

Ելնելով վերոգրյալից առաջարկվում է անվանափոխել գեղասահքի մարզադպրոցը՝ արտահայտելով Երևանի ավագանու և ներկայացված քաղաքական ուժերի անհամաձայնությունը Ռոդնինայի հնչեցրած դիրքորոշումներին:

ԼՈՒՅՍ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հավելված

Տպագրված է ընդամենը 5 օրինակ

Օրինակ _____

/կազմված _____ 2019թ.

և բաղկացած՝ 2 էջից/

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ

_____

N _____ ՈՐՈՇՄԱՄԲ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

_____Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ԳՐԱՆՑՎԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ

02.05.2012թ.

Գրանցման թիվ՝ 222.215.95140

Վկայական՝ 03 Ա 245140

ՀՎՀՀ՝ 02253207

02.05.2012թ.-ին գրանցված կանոնադրության

Թիվ _____ փոփոխությունը գրանցված է

Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործկալության կողմից

«_____» _____ 2019թ.

_____

«ԻՐԻՆԱ ՌՈԴՆԻՆԱՅԻ ԳԵՂԱՍԱՀՔԻ
ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

/Փոփոխություն/

ԵՐԵՎԱՆ 2019

«Իրինա Ռոդնինայի գեղասահքի մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Կանոնադրության տիտղոսաթերթում և 1.1 կետում «Իրինա Ռոդնինայի գեղասահքի մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն» բառերը և դրանց համապատասխան հոլովաձևերը փոխարինել «Երևանի գեղասահքի և հոկեյի մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն» բառերով և դրանց համապատասխան հոլովաձևերով,

2. Կանոնադրության 1.10 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1.10 Կազմակերպության անվանումն է՝

հայերեն լրիվ՝ «Երևանի գեղասահքի և հոկեյի մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն,

հայերեն կրճատ՝ «Երևանի գեղասահքի և հոկեյի մարզադպրոց» ՀՈԱԿ,

ռուսերեն լրիվ՝ «Спортивная школа фигурного катания и хоккея Еревана» общинная некоммерческая организация,

ռուսերեն կրճատ՝ «Спортивная школа фигурного катания и хоккея Еревана» ОНКО,

անգլերեն լրիվ՝ «Yerevan Figure Skating and Hockey Sports School» community non commercial organization.

անգլերեն կրճատ՝ «Yerevan Figure Skating and Hockey Sports School» CNCO.

Սույն փոփոխությունը հանդիսանում է 02.05.2012թ. պետական ռեգիստրում գրանցված «Իրինա Ռոդնինայի գեղասահքի մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության անբաժանելի մասը:

ԼՈՒՅՍ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ